



171

“ԹՈՂ ՏՈՒՔ ԲԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ՊԱՆ:” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1894

ԹԻՒ 1



ԵՆՆԻՅԱՆ ՏՈՒՔ ԵՐԳԻՆԵՐ

ԵՆՆԻՅԱՆ ԵՐԳԻՆԵՐ

Հոս միակ պատկերի մէջ ունինք ներկան և միշտ փառաւոր անցեալը: Երբ կը նայինք պատկերին վրայ, կըր-

նանք երևակայել թէ կը տեսնենք ներկան ներկայացուող մասը որ շարունակ կը փոփոխի, մինչ միւսը միշտ կը մնայ նոյն: Ծննդեան երգերը երգող

մանկունք երբեմն կը հազնին առաջին դարու հանդերձներ, երբեմն տասներորդ դարու և երբեմն իննետասներորդ դարու: Երբեմն երգիչները, ինչպէս կը տեսնէք հոս, Եւրոպացի մանուկներ են, հանքածուխով լեցուն կրակարանին քով կանգնած, երբեմն թուրքիոյ մէկ քրիստոնէարնակ գեղին մանուկներն են, ծովափին կամ Բալթիկ շուրջը հաւաքուած, երբեմն Հարաւային Ծովու կղզեաց մանուկներ են, ուր հիմա ամառ է, որք արմաւենիներու շուքին մէջ նստած կը լսեն Ովկիանոսին այլքներուն ձայնը, որք կարծես թէ ետ կ'անդրադարձնեն անոնց երգերը արձագանգի նման:

Երգողները կը փոխուին, բայց երգն է մի և նոյն՝ բոլոր դարերուն և բոլոր երկիրներուն մէջ: Երբ և կու գայ օրհնեալ Ծննդեան Տօնը, հազարաւոր ուրախ և զուարթ մանկունք կ'երգեն այն փոքրիկ Մանուկը որ ծնաւ ի Բեթլեհէմ, աստղը՝ որ առաջնորդեց մողերը դէպ այն խոնարհ տեղը ուր ծնաւ նա, և հրեշտակաց խումբը՝ որ աւելի քաղցր եղանակաւ քան զոր մահկանացու ականջներ երբեք լսած էին առաջ, հազրդեցին սքանչացած հովիւներուն, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», զուարթարար աւետիսը: Երանի՜ թէ առաջունէ աւելի բազմաթիւ մանկունք միանային այս տարի երգել այս երգը, և երգէին աւելի՛ երջանիկ և աւելի՛ երախտագէտ սիր-


տերով: Յուսարով, սիրելի ընթերցողք, որ դուք ալ կը գտնուիք այն երգիչ մանկանց մէջ, կը մաղթենք ձեզ Ծնորհաւոր Ծնունդ և Երջանիկ նոր Տարի:

ՈՒԹՐԷԻԹԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Պատկերին մէկ կողմի բարձր աշտարակը և միւս կողմի գեղեցիկ շէնքը, կը թուին թէ կապակցութիւն չունին իրարու հետ. ո՞րն է մայր եկեղեցին, երկուքն ալ մասերն են մայր եկեղեցւոյն, որ շինուեցաւ իբր 1253 ին, և էր Հոյանտայի ամենէն շքեղ եկեղեցիներէն մին: 1674 ին սոսկայի փոթորիկ մը փլցոց կործանեց եկեղեցւոյ շէնքին այն մասը որ կը կցէր աշտարակը հիմա կանգուն մնացած միւս մասին հետ, և քաղաքը երբեք բաւական հարուստ եղած չէ և կամ բնակիչք փափաք ունեցած չեն զայն նորէն կանգնելու չափ: Աշտարակին բարձրութիւնն է 338 ոտք, և անոր

չափ մը ցաւալի անյաջողութեանց պիտի հանդիպիք: Եւ այն է՝ բարի կեանք վարել Սատուծոյ և մարդոց առջև: Ամէն մարդ չունի մեծ տաղանդ, և տաղանդ ունեցող ամէն մարդ չունի այն բանը որ ընդհանրապէս կը կոչուի յաջողութիւն. բայց մենէ իրաքանչիւր ոք, թէպէտ ցած դիրքի մէջ ըլլայ, կրնայ այնպէս ապրիլ որ աշխարհ աւելի աղէկ ըլլայ մեր անոր մէջ գրանուելուն պատճառաւ. և այնպէս՝ որ Սատուծոյ թագաւորութիւնը քիչ մը աւելի դիւրութեամբ հաստատուի երկրի վրայ: Այդ է ամենէն լաւ և աղին գործը զոր կրնանք կատարել, և պիտի բերէ աւելի մնայուն երջանկութիւն ներկայ և հանդերձեայ կեանքին համար քան ապրիլ մեր անձերուն

բաւն և փառքը պիտի անցնին. և եթէ միայն ատոնք ունենանք ցուցնելու հոս Սատուծոյ մեզ պարգեւած տարիներուն դէմ, արդարև անոր առջև աղքատ և խեղճ պիտի գտնուինք: Բայց ի՞նչ երանութիւն, եթէ ցուցունենք զՍատուած մեր բոլոր կեանքերուն մէջ, մեր պաշտօնին, ուսման, գրասանաց և առևտրոյն մէջ, եթէ վայելած ենք զնա հոս և կրնանք վայելել յաւիտեանս: Թող չանցնինք աշխարհիս հասանքին հետ առանց նպատակ մը ունենալու մեր առջև. թող նպատակ զնենք ապրիլ Սատուծոյ համար, թող մեր մտածութիւնն անոր վրայ՝ երթայ ոսկի թերի նման մեր կենաց իւրաքանչիւր գործին մէջէն. և սկսինք այս օր:



ՈՒԹՐԷԻԹԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԱՇՈՒՄ ԵՒ ԺԱՆԳՈՑՈՒՄ

«Կը յիշեմ որ» ըսաւ ձեռունի բժիշկ մը, «երբ աղայ էի, հայրս տուն բերաւ երկու շղթաներ, ճիշդ նման իրարու, ագարակին մէջ գործածելու համար: Շատ չանցաւ, անոնց մէ մին կորսուեցաւ, և թէպէտ ամէն տեղ փնտառեցինք զայն, կարող չեղանք գտնել: Կարծուեցաւ թէ գողցուած էր շղթան. բայց չեմ յիշեր թէ արդեօք այդ գողութիւնը ձգեցինք մասնաւոր անձի մը վրայ: «Իմ բժշկական ուսումներս աւարտելէս ետքը, ամառ մը տուն գացի այցելութեան, և այնպէս պատահեցաւ որ այդ տարին հայրս վերցուց քամեծ գէղ մը որ իմ մանկութենէս հետէ կը կենար. ագարակին մէջ: Եւ ահա հոն, քարերուն տակը, կը կենար հին շղթան, որ հաւանականապէս գէղին վրայ ինկած և քարերուն մէջէն վար սահած էր: Հանեցինք զայն և փորձեցինք գործածել, բայց ոյժ չկար այն ժանգոտած և մաշած օղակներուն մէջ, փրկման և վար ինկան երբ թեթևապէս քայուեցան: Իսկ միւս շղթան տակաւին կը գործածուէր: Իրաւ, անոր օղակները քիչ մը մաշած էին, բայց տակաւին պայծառ կը փայլէին և զօրաւոր էին, և պատրաստ տակաւին բաւական ժամանակ օգտակար ծառայութիւն մատուցանելու: «Ասիկէ» ըսաւ յիշեալ անը, «սա դասը սորվեցայ թէ մարդուս կարողութիւնները ամենէն շուտ կորսնցունողն է ծուլութիւնը մանաւանդ քան գործունէութիւնը, անոնց անգործ մնալը մանաւանդ քան գործածութիւնը:»

գազաթէն կ'երևի ամենէն լայնածաւալ առեսարանը զոր հնար է գիտել Հոյանտայի մէջ որ է շատ աափակ երկիր: Աշտարակն ունի 42 փոքր զանգակներ:

Աթթիթի Հոյանտայի ամենէն հին քաղաքն է, և ծանօթ էր հին Հռոմէական օրերուն մէջ: Գեռ կը կենայ այն տունը ուր ծնաւ Ադրիանոս Զ. պապը 1459 ին:

ՆՊԱՏԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ ԱՊՐԻԼ

Երբեք խորհած էք թէ ինչ բանի համար կ'ապրիք: Թերևս ծրագրիներ չինամ էք ձեր միտքերուն մէջ ապագային համար արհեստին կամ պաշտօնին վրայ որոց կ'ուզէք հետևել, և մեծամեծ յոյսեր ունիք թէ ձեր անունը հռչակաւոր պիտի ըլլայ և հարգատեւութիւն պիտի գիղէք: Բայց քան զայս բարձր յաջողութիւն մը կայ ձեռք բերուելու, և պէտք չէ որ զայն դուրս թողուք ձեր հայրենիքէն, եթէ ոչ

համար և մեր փառաւորման համար: Թոմաս Բարլայը, համբաւաւոր սկոթացի, որ գրեց շատ զրբեր, և որ ընդունեց մեծ պատիւներ և գովեստ, ըսաւ իւր ձերութեան մէջ, «Իրափառելի կը ձերանամ—և այժմ ահա կը գտնուիմ յաւիտեանականութեան սեմին վրայ — այնչափ աւելի կը յիշեմ Գրիստոնէականին այն հարց պատասխանին, զոր սորված եմ մանկութեանս օրերը, և աւելի լեցուն և խոր կ'ըլլայ անոր նշանակութիւնը. «Ի՞նչ է մարդուս գլխաւոր վախճանը? Սատուած փառաւորել և զնա վայելել յաւիտեան:» Եւ այդ է բուն ճշմարտութիւնը որ կը գտնուի կարծ խօսքի մը մէջ: Եթէ չապրինք Սատուծոյ և արդարութեան համար, և չցուցնենք թէ կը կենանք աշխարհիս մէջ որպէս զի քաշենք ուրիշներն ևս անոր, մեր կեանքերը պիտի ըլլան անյաջողութեանց չարք մը և աւելի գէշ, վասն զի աշխարհիս բոլոր համ-

րերու մեծ գէղ մը որ իմ մանկութենէս հետէ կը կենար. ագարակին մէջ: Եւ ահա հոն, քարերուն տակը, կը կենար հին շղթան, որ հաւանականապէս գէղին վրայ ինկած և քարերուն մէջէն վար սահած էր: Հանեցինք զայն և փորձեցինք գործածել, բայց ոյժ չկար այն ժանգոտած և մաշած օղակներուն մէջ, փրկման և վար ինկան երբ թեթևապէս քայուեցան: Իսկ միւս շղթան տակաւին կը գործածուէր: Իրաւ, անոր օղակները քիչ մը մաշած էին, բայց տակաւին պայծառ կը փայլէին և զօրաւոր էին, և պատրաստ տակաւին բաւական ժամանակ օգտակար ծառայութիւն մատուցանելու: «Ասիկէ» ըսաւ յիշեալ անը, «սա դասը սորվեցայ թէ մարդուս կարողութիւնները ամենէն շուտ կորսնցունողն է ծուլութիւնը մանաւանդ քան գործունէութիւնը, անոնց անգործ մնալը մանաւանդ քան գործածութիւնը:»

հինք թէ աղէկ բան չէ այդպէս վարուիլ խեղճ անասունին հետ: Կը յիշէ՞ք թէ մենք ամէնքս ալ անգամ մը ի՞նչ եղանք երբ կորսուեցանք անտառին մէջ:»

Երբեք տեսած էք թէ ի՞նչպէս դիւրութեամբ տղայոց, և մարդոց ալ, այդպիսի գէպք մը կու տայ ըլլալ կամ ողորմած կամ անգութ: Երբ խօսք մը զրուցուի այս երկու զգացումներէն մէկով, ահա բոլոր տղայք կը միաբանին և խօսքը խօսողին կը հետեւին ոչխարներու հօտի նման: Աղէկ չէ՞ր ըլլար որ տղայք յիշէին այս բանը, և մտածէին թէ ի՞նչպատասխանատուութեան ներքե կ'իյնան ուրիշներու վրայ իրենց ըրած ազդեցութեան համար:

Տղայք դադարեցան անասունը նեղելէ, և ձիուն վրայ սկսան նայիլ տարբեր աչքով, և ահա անոնցմէ մին նոյն միջոցին սկսաւ վռնտել անոր վրայ գտնուող ճանճերը: «Չայն այդ ծառին տակը կ'ապերնք», ըսաւ ուրիշ մը: «Արեւը շատ տաք է հոս»: «Տղայք, անոր ուտելու քիչ մը բան տանք որ ուտէ քանի որ կը կայնի այսպէս»: «Չե՞ք կ'ընար արդեօք»: «Այո, կըրնանք տալ անոր լաւ ճաշ մը, այնպէս որ ըրած չէ դարձ մը հեռէ, ինչպէս կը ցուցնէ իւր կերպարանքը»: «Օ՛ն, ուրեմն»: «Ես ունիմ դահեկան մը»: «Ես ունիմ քսան փարա»: «Գրահեկան մըն ալ ես կու տամ»: Եկէ՛ք երթանք սա ամբարանոցը:»

Ուրիշ փարաներ ալ հաւաքուեցան: Ամբարանոցին վերակացուն տուաւ գրեթէ մաշած տոպրակ մը, և քանի մը վայրկեան յետոյ խեղճ ծեր ձին առաջին կարգի վարսակէ լաւ կեր մը կերաւ:

Քիչ յետոյ ծեր կինը եկաւ իւր կողովը լեցուցած նպարավաճառէն գրնուած բաներով որոց հետ փոխած էր հակիթները: Կարեկցութեան և մարդասիրութեան զգացումը որ անգամ մը արթնցած էր անփոյժ բայք բարեւանք սիրտերու մէջ, կը շարունակէր ցուցնել ինքզինք: Մենք գիտենք ամէնքս, թէ բարի գործի մը ճաշակը ի՞նչպէս բաղձալ կու տայ մեզ աւելի բարի գործերու:

«Ես կողովդ սայլը պիտի դնեմ», ըսաւ մին ակնածութեամբ: «Տես, հոս բաւական վարսակ մնացեր է. սայլին մէջ դնենք զայն»: «Ինքն ալ գրեթէ սովամահ վիճակի մէջ կը գտնուի ձիուն պէս», չնչեց տղայոց մին: Ասոր վրայ տղայք իրենց կէտորուան ճաշի կողովներէն անապարանօք ուտելիքներ հանելով ծրարեցին թուղթերու մէջ և գրին կողովին երեսը: «Ես հիմա ճամբայ ելլելու եմ», ըսաւ կինը:

Տղայք այնպէս օգնեցին և ծառայեցին ծեր կնոջ որ իբր թէ թագուհի մը ըլլար: Եւ անոնց սիրտերը մեծապէս ուրախացան երբ կնոջ դողդոջուն ձայնը և մթնցած այտրները յայտնեցին ջերմ շնորհակալութիւն մինչ սայլը կը մեկնէր դպրոցին առջևէն:

Այս տղայք ցերեկեայ դպրոցի աշակերտներ էին: Անոնց նման բիւրաւորներ և միլիոնաւորներ կը գտնուին, միայն թէ չեն գիտեր լիովին թէ իրենց սիրտերուն մէջ մարդասիրական ինչ հոգի կը բնակի: Ո՛վ տղայք և աղջիկներ, յայտնեցէ՛ք այդ բարի հոգին: Վասն զի դուք էք որ պիտի բարձրացունէք և հանէք այս ամբողջ աշխարհը աւելի բարձր, քաղցր և պայծառ մթնոլորտի մը մէջ քան զոր տեսած է այն:

ՃԳՆԱԽՈՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Ա.— Բ.)

Քարանձաւի մը մէջ կ'ապրէր բարի ճգնաւոր մը, որոյ մօտ հովիւ մը իւր հօտը գիշերը կը պառկեցունէր: Ոչխարներէն մաս մը դողաւած լինելով, հովիւն իւր տիրոջմէ սպաննուեցաւ իրբեւ մեղսակից գողութեան: Ճգնաւորը տեսնելով անմեղի մը պատժուիլ, սկսաւ կասկածիլ թէ նախանձաւութիւն չկար. որոշեց աշխարհի խառնուիլ, և այլ եւս չնեղել և չկաշկանդել ինքզինք կրօնի սեղմումներով, որք անօգուտ կ'երեւէին իւր աչաց: Երբ իւր քարանձաւէն դուրս ելած կը ճամբորդէր, հանդիպեցաւ մարդկային կերպարանքով հրեշտակի մը որ ըսաւ իրեն, «Ես եմ հրեշտակ մը և ճամբուն մէջ քեզի ընկերանալու համար Աստուծոյ կողմէն զրկուեցայ»: Քաղաք մը հասան և հիւրընկալուեցան աղնուականէ մը որ ճոխ ընթրիքով մը պատուեց զանոնք: Գիշերը հրեշտակն ելաւ, և օրօրոցին մէջ խեղդեց աղնուականին միակ գաւակը. ճգնաւորը զարմացաւ որ իրենց գտած սիրալիք ընդունութիւնն այսպէս կը փոխարինուէր, վախցաւ սակայն ո եւ է գիտողութիւն ընելէ:

Յաջորդ օրն ուրիշ քաղաք մը հասնելով, մեծատուն քաղաքացիէ մը հիւրընկալուեցան, բայց հրեշտակը գիշերն ելաւ և գողցաւ անոր ոսկիէ խիստ թանկագին մէկ բաժակը. ճգնաւորն հետեւցուց թէ իւր ընկերն էր չար հրեշտակի մը: Յաջորդ առաւօտուն երբ կը ճամբորդէին, կամուրջի մը վրայ հանդիպեցան աղքատ մարդու մը. հրեշտակն իրենց ճամբուն վերաբերեալ այլ և այլ տեղեկութիւններ ուզեց անկէ. և երբ ստացաւ տեղեկութիւնները, հրեշտակը մարդը և ձրգեց ջուրը, ուր անմիջապէս ընկմացաւ նա. Երեկոյին հասան քաղաք, և հարուստէ մը խեղդեցին որ իւր տան մէջ պատասպարելու տեղ մը տայ իրենց. մարդը չընդունեց զանոնք իւր տունը, և ըսաւ որ պառկին ոչխարներուն քով. առտուանց երբ կը բաժնուէին, հրեշտակն այդ հարուստին տուաւ գողցած ոսկի գաւաթը:

Ճգնաւորը զարմացաւ որ իրենց բարեկամէն և բարերարէն զոյցուած գաւաթը տրուեցաւ այնպիսի մէկուն որ գիշեր մը իսկ իւր տան մէջ չընդունեց զիրենք. և սկսաւ խորհիլ թէ իւր ընկերն էր սատանայ մը. և ուստի խեղդեց որ իրարմէ բաժնուին և ինք միայնակ ճամբորդէ: Հրեշտակն ըսաւ, Լսէ ինչ որ պիտի ըսեմ հիմա և յետոյ բաժնուէ: «Երբ կ'ապրէիր առանձնութեան մէջ, հովիւ մը սպաննուեցաւ իւր տիրոջմէն. նա գործուած գողութենէն անպարտ էր բոլորովին. բայց եթէ սպանուած չլինէր, յետոյ պիտի գործէր սփերներ՝ ուրոց մէջ անզեղ պիտի մեռնէր: Իսկ անոր տէրն այդ արատը իրմէն մաքրելու համար նուիրեց իւր կենաց մնացեալ մասը ողորմութեան և զթուութեան գործերու:»

«Խեղդեցի աղնուականին որդին, բայց գիտցիր թէ այնքան կ'ախտաւոր իւր դաւակին համար հարստութիւն զիջել, որ զանց կ'ընէր այլ եւս այն բարերարութիւններն որոց համար այնքան նշանաւոր էր. և այժմ իւր նախկին սովորութեան և բարուց կը հետեւի: Գողցաւ հիւրընկալ քաղաքացւոյն ոսկի գաւաթը. բայց գիտցիր որ այդ գաւաթին պատճառաւ եղած էր ստեղծի արբեցող մը և հիմա իւր ակտէն բժշկուած է:»

«Ջուրը նետեցի խեղճ մարդը որ այդ տան պարկեշտ և կրօնասէր էր. բայց գիտցիր որ եթէ մզոն մը հեռանար, ահաւոր սպանութիւն մը պիտի գործէր: Ոսկի գաւաթը տուի հարուստին որ մերժեց զմեզ պատասպարել. նա այսպէս ընդունեց իւր վարձքը աշխարհի վրայ, բայց հանդերձեալ կենսոյն մէջ պիտի պատժուի իւր ամբողջութեան համար:»

Ճգնաւորը հրեշտակին ոտքն ինկաւ ներում խեղդելով. և գարձած իւր քարանձաւը, լիովին համոզուած թէ Աստուծոյ կառավարութիւնն համակ իմաստութիւն և արգարութիւն է:

Անգլիերէնէ Գ. Գ. ՊԱՐԻՔԻՆԵԱՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒՆ ՄԵՎ ԽՕՍԲԸ

- Ե՛ս կը բաղկանամ վաթսուհներս տասերէ,
- Իմ 1. 18. 4. 9. 27. 32 Ե՛ր Տեմբեթոսի մայրը .
- Իմ 43. 30. 19. 32. 35. 51. 57. 63 Ե՛ր Դաւթի քերթերէն մէն .
- Իմ 3. 33. 5. 13. 12. 15 Ե՛ր Ենայի որբուց մին .
- Իմ 24. 20. 62. 17. 41. 41. 63 Ե՛ր Աբրահամու կանանց մէն .
- Իմ 54. 60. 11. 56 Ե՛ր Մովսէսի դէմ ապստամբութիւնը .
- Իմ 6. 38. 23. 63. 2 Ե՛ր այն որով ծածկեցան Դաւթի լրագրները .
- Իմ 7. 37. 31. 42. 59 Ե՛ր Հայ Նշանաւոր պատմիչ մը .
- Իմ 8. 25. 64. 42. 29. 7. 21. 5 Ե՛ր Երբօրայի մէկ երկրը .
- Իմ 48. 10. 26. 19 Ե՛ր Անգլիոյ ծովագետացի մէկ քաղաքը .
- Իմ 44. 16. 9. 58 Ե՛ր գարշելի մեղսա մը .
- Իմ 49. 22. 45. 39. 64 Ե՛ն մարդկային զինաց զբայ .
- Իմ 46. 55. 61. 33 Ե՛ր Աբրահամու տուն մը .
- Իմ 28. 50. 36. 40. 34. 47 Ե՛ն Հայերէն ձայնաւոր տասերէ:


Կ. Պրին 804. 05. 6 ՂԱՅԱՉԵ

ՊԱՏՄՈՒՆ ԵՆՈՅՄԲԵՐԻ Ա. ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ Ահարոնի գաւաթանը: Թու. ԺԷ. 8:

ՊԱՏՄՈՒՆ Բ. ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ Ոսկի մուկերը: Ա. Թագ. Զ. 5:

Լուծեցին, Կ. պրին Սամուէլ Ա. Գուրախի Պարսիկացի, — Մկրտչ

Ամերիկայի Միտիոնարը Արտոնատէր Տնօրէն—Սմբակը Յինճանըլար Եղգորտի Ստան



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹ Ի ՏՈՒՐԱՆ Ա. ՅԱՆՈՒ ՊՕՅԱՉԵԱՆ